Հաստատված է

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գիտական խորհրդի 2014 թվականի փետրվարի 26-ի թիվ 11 նիստում
Գիտական խորհրդի նախագահ,
Ռեկտոր Ռուբեն Միրզախանյան

# ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

## ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԵՆԱԿԵՏԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ՝

**2014-2018**

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


ՆԱԽԱԲԱՆ ........................................................................................................ 3

ԱՐԴԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ ԵՎ ՀԱՄԸՆԹԱՑ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ ........... 4

ՀԵՆԱԿԵՏԱՅԻՆ ԴՊՐՈՑԻ ԵՎ ՎԱՐԺԱՐԱՆԻ (ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ) ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆԵՐԿԱ ՎԻՃԱԿԸ ........................ 7

ՀԵՆԱԿԵՏԱՅԻՆ ԴՊՐՈՑԻ ԵՎ ՎԱՐԺԱՐԱՆԻ (ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ) ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՍԽԵՄԱՆ ...................................... 11

ՀԵՆԱԿԵՏԱՅԻՆ ԴՊՐՈՑԻ ԵՎ ՎԱՐԺԱՐԱՆԻ (ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ) ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ ............ 13

ՀԵՆԱԿԵՏԱՅԻՆ ԴՊՐՈՑԻ ԵՎ ՎԱՐԺԱՐԱՆԻ (ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ) ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԻՆ ՀԱՍՆԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ .......................................... 14

ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԻ, ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՎՏԱՆԳՆԵՐԻ (SWOT) ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ .......................................... 26

# ՆԱԽԱԲԱՆ

**Սույն ռազմավարական ծրագիրը մշակվել է ՀՊՄՀ-ի ռեկտորի հրամանով ստեղծված հանձնաժողովի կողմից,** շահակիցների գործուն մասնակցությամբ և օժանդակությամբ: Հանձնաժողովը լիահույս է, որ սույն նախագիծը կյանքի կկոչվի շահագրգիռ քննարկումների հիման վրա և համալսարանի աշխատակիցների անմիջական մասնակցությամբ:

Ռազմավարական ծրագիրը միտված է ապահովելու սովորողների անձնային, սոցիալական և հոգևոր շարունակական զարգացումը և մրցունակությունը միջազգային և ազգային կրթական տարածքում՝ հանրակրթության բոլոր մակարդակներում որակական չափանիշների նախագծման և ներդրման միջոցով:

**Կրթամալիրի գործունեությունը միտված է սովորողի բազմակողմանի զարգացմանը, մասնագիտական կողմնորոշմանը և նախնական մասնագիտական կրթությանը, բարենպաստ կրթական միջավայրի ձևավորմանն ու շարունակական զարգացմանը:**

Ծրագրի առաջին բաժնում վերլուծվել են կրթահամալիրին առնչվող հիմնական միտումներն ու մարտահրավերները: Քննարկվել են մի շարք գործոններ, որոնք կարող են ազդեցություն ունենալ ծրագրի գործողությունների և քայլերի վրա:

Այնուհետև համառոտ ներկայացվել է դպրոցի և վարժարանի պատմությունը և ներկա վիճակը, նոր կազմակերպական կառուցվածքի նախագիծը, նպատակը, առաքելությունը և խնդիրներն ու դրանց հասնելու ուղիները:

Ծրագրում ներկայացված “ռազմավարական ուղղությունները” բաժնում ներկայացված են կատարման ենթակա կոնկրետ քայլերը, անհրաժեշտ ռեսուրսները, ֆինանսավորման հնարավոր աղբյուրներն ու կատարման վերջնաժամկետները:

Ռեսուրսների պլանավորման ընթացքում հանձնաժողովը հաշվի է առել համալսարանի ամբիոնների կողմից ներկայացված պատասխանատուներին ներգրավելու անհրաժեշտությունը, սակայն փորձ է արել պահպանել ծրագրի ընդհանուր կառուցվածքային միասնականությունը և առկա մեկնարկային հնարավորությունները:

Ծրագրի վերջում կատարվել է թույլ և ուժեղ կողմերի, վտանգների և հնարավորությունների վերլուծություն:

# ԱՐԴԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ ԵՎ ՀԱՄԸՆԹԱՑ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ

**Համընդհանուր միտումների** շարքում հարկ է նշել աշխատաշուկայի և կրթության միջև կապի սերտացման, աշխատաշուկայի պահանջներին ավելի ճկուն արձագանքելու, տեղեկատվական անվտանգության, մշակութային գործոնների հաշվառման, ծանր կենսապայմաններում գտնվող անձանց հոգեբանական աջակցության, հնարավոր նոր մարտահրավերներին դիմակայելու անհրաժեշտությամբ պայմանավորված կառավարման ռազմավարության մշակման, աղետների ռիսկերի նվազեցման, հոգեբանական և այլաբնույթ հետևանքների հաղթահարման հիմնախնդիրները: Դրանց լուծումը նախևառաջ ենթադրում է անձնային և մասնագիտական զարգացման նոր հարացույցի մշակման և արժեքների պահպանման ու փոխանցման համար գործընթացն իրականացնելու ռազմավարական նպատակների որոշում և գործողությունների պլանավորում:

**Քաղաքական մարտահրավերներն** արտահայտվում են աշխատանքային կանոնների սահմանման, բանիմաց և գործունակ կադրային քաղաքականության մշակման և իրականացման, աշակերտակենտրոն մոտեցումների որդեգրման, անվտանգ կենսագործունեության ապահովման համար օրինաստեղծ գործունեության մեջ: Նշված և դրանց առնչվող բոլոր ուղղություններում անհրաժեշտ է կրթության նոր քաղաքականության և ընթացակարգերի մշակումը: Չնայած կրթությունը բարեփոխելու վերջին տասնամյակում գործադրված հսկայական ջանքերին՝ նրա զարգացումը դեռևս մի շարք ոլորտներում շարունակում է խնդրահարույց մնալ: Դա առաջին հերթին պայմանավորված է որոշակի դիրքորոշումների առկայությամբ, ինչպես նաև արդի մարտահրավերներին դիմակայելուն պատրաստ մասնագիտական կադրերի բացակայությամբ:

**Տեխնոլոգիական մարտահրավերներն** արտահայտվում են տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների (ՏՀՏ-ների) զարգացման, ՀՀ-ում այդ ոլորտի գերակայության, ինչպես նաև այդ ուղղությամբ կատարված քայլերի և ռազմավարական պլանների ձևով: Համոզված ենք, որ ՏՀՏ-ների ներդրումն ու կրթության որակի ապահովումը հանդես են գալիս որպես կրթահամալիրի զարգացման գերակա խնդիրներ, որոնք ծնում են նոր մարտահրավերներ՝ կապված ՏՀՏ ոլորտի մասնագետների պատրաստման, կրթության ոլորտում

բարձր տեխնոլոգիաների ներդրման, տեղեկատվական անվտանգության ապահովման և այլաբնույթի խնդիրների հետ:

**Տնտեսական մարտահրավերներ:** Հայտնի է, որ անցումը դեպի կրթության արդյունավետ մոդելի կարող է հնարավոր դառնալ միայն գլոբալ կրթական համակարգի հետ լայն համագործակցության միջոցով: Վերջինս զգալի նյութական և այլ ռեսուրսներ է պահանջում, որը հնարավոր է տնտեսական կայուն աճի պայմաններում: Մյուս կողմից դա կապվում է միգրացիոն գործընթացների և, համապատասխանաբար, կրթության բովանդակության փոփոխությունների հետ: Տնտեսական մարտահրավերներն արտահայտվում են նաև որակյալ կրթության մատչելիության ապահովման անհրաժեշտությամբ, որը ենթադրում է համապատասխան քայլերի և միջոցառումների իրականացում:

**Սոցիալական մարտահրավերներն** արտահայտվում են անցումային շրջանին բնորոշ ֆիզիկական և հոգևոր առողջության, կրթության շարունակականության ապահովման համար ռիսկային այնպիսի դրսևորումներում, ինչպիսիք են սոցիալական անհավասարությունը, արժեքների փոփոխությունները, սովորողների կարիքներին համապատասխան կրթական ծառայությունների կազմակերպման խնդիրները: Դրանց դիմակայելու համար նախատեսվում է ներդնել հումանիստական կրթության ժամանակակից մոդելներ:

**<u>Կրթահամալիրի զարգացման գործոնների վերլուծություն.</u>**

2013թ. հենակետային դպրոցում և վարժարանում իրականացված ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ դրանց զարգացմանը խոչընդոտող հիմնական գործոններն են`

1) նյութատեխնիկական բազայի ֆիզիկական և բարոյական մաշվածությունը /շենքային պայմաններ, գույք և այլն/,
2) առարկայական կաբինետների բացակայությունը /լաբորատոր սարքավորումներ, օժանդակ նյութեր և այլն/,
3) գրադարանի և ուսումնական այլ ռեսուրսների անբավարարությունը,
4) խմբակների բացակայությունը,
5) աշակերտների ընդհանուր ուսումնական ցածր մոտիվացիան,
6) ուսուցիչների հոգեբանամանկավարժական և մեթոդական կարողությունների համեմատաբար թույլ զարգացվածությունը,
7) դպրոցի ցածր մրցունակությունը տարածքի դպրոցների համեմատությամբ,
8) ծնողների սակավ ներգրավվածությունը դպրոցի աշխատանքներում,
9) տեղեկատվական տեխնոլոգիաների ոչ բավարար կիրառությունը,
10) կառավարման արդյունավետ մոդելների սակավությունը,
11) բակի տարածքի օգտագործման խնդիրները,

12) ըստ հետաքրքրությունների արտադասարանական աշխատանքների սակավությունը:

Ի թիվս այս և այլ գործոնների՝ որոշակի խոչընդոտ պետք է դիտարկել մասնագիտական ուղղվածությամբ դպրոցների սակավությունը կամ գրեթե իսպառ բացակայությունը; Թերևս այս մարտահրավերին դիմակայելու արդյունավետ միջոց կարող է հանդիսանալ ՀՊՄՀ-ի կազմում կրթահամալիրի ստեղծումը, որը հանդես կգա որպես նորարարական-հետազոտական հանրակրթական կենտրոն: Նշված ընդհանուր նպատակային գործողությունների իրականացման պարագայում կրթահամալիրը կդառնա առաջանցիկ կրթափորձի տարածման և գործնական ուղղվածությամբ մասնագիտական զարգացման դպրոցի արդյունավետ նախատիպ:

# ՀԵՆԱԿԵՏԱՅԻՆ ԴՊՐՈՑԻ ԵՎ ՎԱՐԺԱՐԱՆԻ (ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ) ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆԵՐԿԱ ՎԻՃԱԿԸ

## Ա. Հիմնական դպրոց

1995 թվականին դպրոցն անվանակոչվել է Վահան Թոթովենցի անունով: 1993 թվականից դպրոցի տնօրենը Սուսաննա Խաչատրյանն է:

Դպրոցում ձևավորվել են հարուստ ավանդույթներ. պարբերաբար կազմակերպվում են առարկայական օլիմպիադաներ, վիկտորինաներ, սպորտլանդիաներ, էքսկուրսիաներ, հանդիպումներ հասարակական-քաղաքական, մշակութային, այդ թվում նաև դպրոցի շրջանավարտ անվանի գործիչների հետ:

Դպրոցն ունի հայրենագիտական թանգարան-դասարան, որը վերջերս հարստացել է ֆրանսահայ նկարչուհի Թագուհի Միքայելյան-Ավետիսյանի՝ դպրոցին նվիրված «*Խաղաղությունը մեր մեջ է*» խորագրով ցուցահանդեսով:

Դպրոցում գործում է անվճար երկարօրյայի խումբ, որտեղ ստեղծված են աշակերտների հանգիստը, խաղերը և դասերը պատրաստելու համար բոլոր անհրաժեշտ պայմանները:

Դպրոցի կազմակերպչական աշխատանքներին ակտիվորեն մասնակցում է ծնողական համայնքը: Տնօրինությունը պարբերաբար նիստեր է անցկացնում մանկավարժների, ծնողական խորհրդի անդամների մասնակցությամբ, որոնց ընթացքում քննարկվում են դպրոցի հիմնախնդիրները, տրվում են դրանց լուծման առաջարկներ: Յուրաքանչյուր ամսվա վերջին ուրբաթ օրը դպրոցում հայտարարված է բաց դռների, դասալսման օր. ծնողները մասնակցում են դասերին:

Դպրոցը պարբերաբար մասնակցում է միջդպրոցական բոլոր միջոցառումներին, սպորտլանդիաներին, ինտելեկտուալ խաղերին, շախմատի մրցումներին, ինչպես նաև միջազգային «Կենգուրու», «Ռուսական արջուկ» մրցույթներին, որտեղ և ունեցել է մրցանակակիրներ:

Տարիներ շարունակ դպրոցը եղել է Խաչատուր Աբովյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի (ներկայումս Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան՝ ՀՊՄՀ) «Պատմաաշխարհագրական», «Ֆիզմաթ», ֆակուլտետների և Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտի ուսանողների պրակտիկայի անցկացման բազային դպրոց:

2013 թվականի հունվարից դպրոցը դարձավ ՀՊՄՀ-ի հիմնական դպրոց:

2013-2014 ուսումնական տարվա սկզբում դպրոցի ուսումնական ծրագրերը ենթարկվեցին փորձաքննության համալսարանի համապատասխան ամբիոններում: Մեթոդական և պրակտիկ աջակցություն ցույց տրվեց դպրոցի մանկավարժներին, պարբերաբար կազմակերպվեցին դասալսումներ, ուսուցիչների վերապատրաստման դասընթացներ: Համալսարանի մագիստրոնները կամավոր սկզբունքով օգնում են ուսուցիչներին, մասնակցում դասապատրաստման գործընթացին, բաց դասերին:

Համալսարանի տնօրինության ջանքերով համալրվեց և թարմացվեց 1-ին դասարանցիների համար նախատեսված կահույքը, տարրական օղակի համար (I-IV) ապահովվեց անվճար սնունդ: Գործում են երգ-երաժշտության, լրագրության, նկարչության, համակարգչային, թատերական, շախմատի, սպորտի խմբակներ:

Ներկայումս համատեղ մշակվում է ՀՊՄՀ-վարժարան-դպրոց սովորողի համակողմանի զարգացմանը, մասնագիտական կողմնորոշմանն ու կրթությանը միտված բարենպաստ կրթական միջավայրի զարգացման ծրագիր՝ այն կրթահամալիր դարձնելու համար:

## Բ. Ավագ դպրոց-վարժարան

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի **հենակետային ավագ դպրոց-վարժարանը** հիմնադրվել է 1994 թվականին: Մինչև 1999թթ. նրա աշխատանքները ղեկավարել է Ալեքսանդր Ղուշչյանը:

1999 թվականից մինչ օրս վարժարանը ղեկավարում է մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Նաիրա Ավետիսի Սաֆարյանը:

Վարժարանի հիմնադրման առաջին իսկ օրվանից այստեղ դասավանդում են բանիմաց և փորձառու ուսուցիչներ, մանկավարժական համալսարանի համապատասխան ամբիոնների առաջատար դասախոսներ, դպրոցական դասագրքերի և ձեռնարկների հեղինակներ և անվանի մանկավարժներ: Իր գոյության ավելի քան 19 տարիների ընթացքում վարժարանն ունեցել է 1500 շրջանավարտ, որոնցից 1450-ը ընդունվել են բուհեր, այդ թվում 1200-ը՝ մեր համալսարան: **Վարժարանի շրջանավարտներից 27-ը տարբեր մասնագիտությունների գծով գիտությունների թեկնածուներ են**:

**Վարժարանն** իր գործունեության բոլոր տարիներին հանդիսացել է համալսարանի մանկավարժական պրակտիկաների կազմակերպման և անցկացման կարևոր բազա: Այնտեղ գիտահետազոտական աշխատանքներ են կատարում ամբիոնների դասախոսները, ասպիրանտները, հայցորդներն ու մագիստրոնները:

Բուհի կառույցում վարժարանի գոյությունը կարևոր քայլ է կրթության համակարգում որակական նոր խնդիրների շարունակական բարելավման գործընթացում: Ինտեգրման արդյունքում ապահովվում է կրթական գործունեության շարունակականությունը, լուծվում են մանկավարժական կադրերի պատրաստման խնդիրները:

**Վարժարանի մանկավարժական կոլեկտիվն այսօր համալրված է երիտասարդ կադրերով, որոնց մաս են կազմում վարժարանի նախկին շրջանավարտները:** Վարժարանի մանկավարժները հաճախ տարբեր զեկուցումներով հանդես են գալիս գիտաժողովներում:

Վարժարանում գործում են *մանկավարժական, ծնողական և աշակերտական խորհուրդներ*, առարկայական մեթոդմիավորումներ, որոնք *մշտապես համագործակցում են համալսարանի համապատասխան ամբիոնների հետ:* Վարժարանի աշակերտները հնարավորություն ունեն օգտվել ՀՊՄՀ-ի լաբորատորիաներից, գրադարանից, իսկ ՀՊՄՀ-ի ուսխորհրդի հետ համատեղ պարբերաբար կազմակերպվող միջոցառումները հնարավորություն են տալիս սերտացնել շփումն ու համագործակցությունը ուսանողների և աշակերտների միջև: Ակտիվ համագործակցություն է տարվում նաև վարժարանի առարկայական մեթոդմիավորումների և ՀՊՄՀ-ի դասախոս-մեթոդիստների միջև:

Ընդառաջ գնալով կրթական համակարգում այսօր ընթացող բարեփոխումներին՝ վարժարանում տարվում է ավագ դպրոցի չափորոշիչներին և ծրագրային պահանջներին համապատասխան ուսումնառություն կազմակերպելու գործընթաց, ինչը պայմանավորված է ՀՊՄՀ-ի հենակետային վարժարանը ՀՀ հանրակրթական ավագ դպրոցների շարքում առաջատարը տեսնելու՝ համալսարանի ղեկավարության վճռականությամբ:

Վարժարանում այժմ գործող մշակութային (ռեժիսուրա-օպերատորություն, գեղարվեստական լուսանկարչություն, նկարչություն-դիզայն) և հումանիտար (հոգեբանություն, լրագրություն), բնագիտամաթեմատիկական (ֆիզիկա, մաթեմատիկա, քիմիա, կենսաբանություն) հոսքերում 10-12-րդ դասարաններում սովորում է 351 աշակերտ: Վարժարանը համագործակցում է այլ ավագ դպրոց-վարժարանների հետ:

*ՀՀ ԿԳ նախարարի ՄՔ N 554 /10,06,2010թ./ հրամանով «Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպությանը տրվել է միջնակարգ ընդհանուր /3-րդ աստիճան/ կրթական ծրագրով գործունեության լիցենզիա: ՀՀ կառավարության 2011թ. դեկտեմբերի 29-ի որոշմամբ «Վ.Թոթովենցի անվան համար 57 հիմնական դպրոցը» ներգրավվել է Խ.Աբովյանի ավան հայկական պետակա մանկավարժական համալսարանի կազմում:*

ՀՊՄՀ-ի հենակետային (ավագ դպրոց) վարժարանի դասերն այսուհետ անցկացվում են ուսումնական նոր շենքում՝ Վ.Թոթովենցի անվան համար 57 հիմնական դպրոցում:

# ՀԵՆԱԿԵՏԱՅԻՆ ԴՊՐՈՑԻ ԵՎ ՎԱՐԺԱՐԱՆԻ (ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ) ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՍԽԵՄԱՆ

***1. Կրթահամալիրի ղեկավար մարմիններ***

Կրթահամալիրի կառավարման խորհուրդ
Կրթահամալիրի աշխատողների ժողով
Մանկավարժական խորհուրդ
Կրթահամալիրի ծնողական խորհուրդ
Աշակերտական խորհուրդ

***2. Խորհրդակցական մարմիններ***

Կրթահամալիրի հոգաբարձուների խորհուրդ

**3. Կրթահամալիրի գործադիր մարմիններ**

Կրթահամալիրի տնօրինություն /տնօրեն, փոխտնօրեններ/
Առարկայական մեթոդմիավորումների նախագահներ
Մասնագիտական ծառայություններ /հոգեբան, սոցիալական մանկավարժ, լոգոպեդ և այլն/

***4. Կրթահամալիրի ենթակառուցվածքներ***

- Դպրոց-մանկապարտեզ
- Տարրական դպրոց
- Հիմնական դպրոց
- Ավագ դպրոց
- Վարժարան

***Լրացուցիչ կրթության կենտրոններ***

- Մարզադպրոց
- Երաժշտական և պարի դպրոց

Ուսուցիչների մասնագիտական զարգացման դպրոց
Լաբորատորիաներ
Ակումբներ, արտադասարանական խմբակներ

***Ծառայություններ***

- Բժշկամանկավարժահոգեբանական կենտրոն
- Տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաների կենտրոն
- Գրադարան
- Բուժկետ
- Ճաշարան-բուֆետ

## ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՍԽԵՄԱՆ



# ՀԵՆԱԿԵՏԱՅԻՆ ԴՊՐՈՑԻ ԵՎ ՎԱՐԺԱՐԱՆԻ (ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ) ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ

Ռազմավարական ծրագրի **նպատակն** է ստեղծել ժամանակակից ուսումնագիտական նորարարական կենտրոն՝ կրթահամալիր, որտեղ ստեղծված կլինեն պայմաններ և հնարավորություններ՝

- շարունակական կրթության իրականացման,
- կրթության բարձր որակի ապահովման,
- ստեղծագործականության զարգացման,
- մասնագիտական կողմնորոշման,
- մասնագիտական զարգացման,
- մանկավարժական գիտության զարգացման,
- այլընտրանքային առարկայական ծրագրերի և դասագրքերի ստեղծման համար:

**Կրթահամալիրի առաքելությունը**

Կրթահամալիրը սովորողների և սովորեցնողների համայնք է, որի մանկավարժական դավանանքը /կրեդոն/ միմյանց նկատմամբ հարգանքն ու համագործակցության գիտակցումն ու պատրաստակամությունն է, հավատը սովորողների ուժերի, հնարավորությունների, արժանիքների, օժտվածության և բացառիկության նկատմամբ:

Կրթահամալիրի համայնքը **պարտավոր** է.

- ընդունել, որ ուսուցման գործընթացը պետք է դառնա հաճելի և ստեղծագործական գործընթաց,
- օգնել սովորողներին ձեռք բերելու ակադեմիական գիտելիքներ և անձնային որակներ. նպաստել յուրաքանչյուրի ինքնազարգացմանն ու ինքնադրսևորմանը,
- կրթահամալիրում և դասարանում ստեղծել բարենպաստ պայմաններ՝ ակտիվ սովորելու, տարբեր իրավիճակներում ընտրություն կատարելու, համարձակ գործունեություն ծավալելու, սեփական կարծիքն արտահայտելու համար,
- պարբերաբար գնահատել սովորողների առաջընթացը և օպերատիվ արձագանքել նրանց փոփոխվող պահանջմունքներին,
- նպաստել սովորողների՝ որպես ապագա քաղաքացիների գիտակցված պատասխանատվության աճին դպրոցի կյանքին ակտիվ մասնակցելու միջոցով:

## ՀԵՆԱԿԵՏԱՅԻՆ ԴՊՐՈՑԻ ԵՎ ՎԱՐԺԱՐԱՆԻ (ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ) ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԻՆ ՀԱՍՆԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ

| Միջոցառման անվանումը | Ակնկալվող արդյունքները | Պատասխանատու (ներ) | Կատարման ժամկետը |
|---|---|---|---|
| **Խնդիր N 1** Կրթական բարենպաստ միջավայրի, բարոյահոգեբանական դրական մթնոլորտի ապահովում | | | |
| *Սովորողների ընդունելության չափանիշների և ընթացակարգերի հստակեցում* | *բոլոր սովորողների համար մեկնարկային հավասար պայմանների ապահովում* | Թոփուզյան Ա., Սաֆարյան Ն., Խաչատրյան Մ., Խաչատրյան Հ. | 2014թ.հունիս, օգոստոս |
| Դասասենյակների կահավորում, կահավորման պայմանների մասին տեղեկատվության հասցեագրում նյութատեխնիկական ապահովման պատասխանատուներին | *վեց տարեկանների համար ուսումնական հատուկ պայմանների ստեղծում* | Թամազյան Ա., Խաչատրյան Հ. | 2014թ.հունիս - օգոստոս |
| Փոխվստահության և բռնության ռիսկի նվազեցմանը միտված կարողությունների գնահատում և զարգացում | *կրթահամալիրում բռնությունների, վախի, պիտակավորման որևէ երեխայի նկատմամբ խտրական վերաբերմունքի բացառում* | Հոգեբան.գիտ. լաբորատորիա | 2014-2018թթ. |
| Կրթահամալիրի բոլոր ծառայությունների (գրադարան, սպորտդահլիճ և այլն) հասանելիության պարբերական | *կրթահամալիրի հարմարեցումը բոլոր երեխաների կարիքներին, կրթահամալիրի բոլոր* | Թամազյան Ա., Ավազյան Ա. | 2014-2018թթ. |

| | | | |
|---|---|---|---|
| գնահատում | *ծառայություններից / գրադարան, սպորտդահլիճ և այլն/ օգտվելու հավասար հնարավորությունների ստեղծում* | | |
| *Բազմամասնագիտական խմբի և Սոցիալ-հոգեբանական, մանկավարժական և մարզական առողջարարարական ծառայությունների հիմնում, համապատասխան միջոցառումների կազմակերպում* | *կրթահամալիրում երեխաների ֆիզիկական և հոգեկան առողջության պահպանման, սովորողների հոգեբանական զարգացման ու առողջ ապրելակերպի համար լիարժեք պայմանների ապահովում* | Լպուտյան Ս.<br>Կարապետյան Վ.,<br>Հոգեբան.գիտ.<br>լաբորատորիա<br>Պետրոսյան Ս.,<br>Սաֆարյան Ն. | 2014-2018թթ. |
| | *Ուսուցիչ-աշակերտ սուբյեկտ-սուբյեկտային, համագործակցային և գործընկերային հարաբերությունների հաստատում* | Պետրոսյան Ս.<br>Սաֆարյան Ն. | 2014-2018թթ. |
| **Խնդիր N 2** Կրթության բովանդակության, ուսուցման մեթոդների, ձևերի արդիականացում | | | |
| *Կրթության արդյունքին, դժվարությունների վաղ ախտորոշմանը և դրանց հաղթահարմանն ուղղված քաղաքականության մշակում և իրականացում* | *կրթության պետական չափորոշիչների համաձայն կրթության որակի ապահովում* | Մելիք Բախշյան Մ.<br>Թոփուզյան Ա.,<br>Խաչատրյան Հ.<br>Պետրոսյան Ս.<br>Սաֆարյան Ն. | 2016թ.<br>Դեկտեմբեր |

| | | | |
|---|---|---|---|
| *Կրթահամալիրի առարկայական մեթոդմիավորումների և համալսարանի մասնագիտական ամբիոնների պլանների համատեղ մշակում և իրականացում, առարկայական ծրագրերի, դասագրքերի համատեղ վերանայում, այլընտրանքային առարկայական ծրագրերի և դասագրքերի համատեղ մշակում, փորձարկում և հրատարակում:* | *ուսումնական նյութերի բարելավում* | ամբիոններ, Մելիք-Բախշյան Մ. Պետրոսյան Ս.Սաֆարյան Ն. | 2014-2018թ.թ. |
| *Կրթահամալիրի և ՀՊՄՀ ամբիոնների անձնակազմի* կառավարման, մանկավարժական, հաղորդակցական և այլ կարողությունների զարգացում, համատեղ սեմինարների պլանի և գործողությունների ժամանակացույցի մշակում*:* | *կրթահամալիրի և բուհի համագործակցության ապահովում ուսանողների գիտամանկավարժական և հետազոտական պրակտիկաների կազմակերպման գործընթացում* | Խաչատրյան Հ., Տողանյան Ն., Սարգսյան Վ. | 2015-2018թ.թ. Սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին |
| Ուսուցման գործընթացում *ՏՀՏ-ների* կիրառում և մանկավարժեցում: | *ուսուցման գործընթացում ՏՀՏ-ների կիրառման արդյունավետության բարձրացում* | Թոփուզյան Ա., ՀՊՄՀ-ի Ինֆորմ.-ի ամբիոն Պետրոսյան Ս.Սաֆարյան Ն. | 2015-2016թ.թ. |
| **Խնդիր N3** Կրթահամալիրի նյութատեխնիկական բազայի ամրապնդում | | | |

| | | | |
|---|---|---|---|
| *Կրթահամալիրի նստարանային ֆոնդի, դասասենյակների պատերի գույների և կահավորման այլ գործընթացների պլանավորում և իրականացում՝ սովորողների տարիքային առանձնահատկությունների հաշվառմամբ* | *Կահավորման և վերանորոգման միասնական և նպատակահարմար չափանիշների հստակեցում* | Թամազյան Ա. | 2014-2015թ.թ. |
| *Կրթահամալիրի վերանորոգման իրականացում /առանձին պլանով/* | *Կրթահամալիրի նյութատեխնիկական բազայի բարելավում* | Թամազյան Ա. | 2015-2016թ.թ. |
| **Խնդիր N4** Կրթահամալիրի կառավարման համակարգի արդիականացում | | | |
| Կառավարման արդյունավետության բարձրացմանը նպաստող կարողությունների զարգացում, համապատասխան իրավական փաստաթղթերի մշակում և ընդունում | *Դպրոցի կառավարմանը, որոշումների ընդունմանը կրթական գործընթացի բոլոր մասնակիցների ընդգրկում, , նրանց ակտիվության, ինքնագործունեության, նախաձեռնողականության խթանում և դեկավար կազմի մշտական հաշվետվողականության ապահովման միջոցով* | Ավագյան Մ.<br>Թոփուզյան Ա.<br>Խաչատրյան Հ.,<br>Թարախչյան Է.<br>Սարգսյան Վ. | 2015թ. |

| | | | |
|---|---|---|---|
| | *կրթահամալիրի ենթակառուցվածքների միասնականության և համագործակցության ապահովում՝ կենտրոնացման և ապակենտրոնացման զուգորդման սկզբունքի իրականացման միջոցով:* | Մելիք-Բախշյան Մ. տնօրեններ | 2016թ. |
| *Կրթահամալիրի գործունեության կառավարման հիմքում մանկավարժական մշտադիտարկման, վերլուծության, պլանավորման, վերահսկողության և այլ գործառույթների ներդնում* | *կառավարման գործընթացի որակի շարունական բարելավման կառուցակարգերի ներդնում* | Մելիք-Բախշյան Մ. Թոփուզյան Ա. Ավագյան Մ. Սարգսյան Վ. | 2015-2018թթ. |
| <<Վարչական անձնակազմի գործունեության կազմակերպման ուղեցույց>>, <<Մանկավարժ-հոգեբանի ուղեցույց>>, <<Մանկավարժ-սոցիոլոգի ուղեցույց>>, <<Դասղեկի ուղեցույց>>, <<Դաստիարակի ուղեցույց>> ուսումնամեթոդական ձեռնարկների պատրաստում: | *Կառավարման և մանկավարժական գործընթացների կանոնակարգվածության մակարդակի բարձրացում* | Մելիք-Բախշյան Մ. Թոփուզյան Ա.Աղուզումցյան Գ., Թադևոսյան Հ., Մանուկյան Ռ., հոգեբ.գիտ. լաբորատորիա | 2014-2017թ.թ. |
| **Խնդիր N5** Մանկավարժական կադրային քաղաքականության իրականացում | | | |

| | | | |
|---|---|---|---|
| Կադրային ընտրության և մարդկային ռեսուրսների զարգացման քաղաքականության մշակում և ներդնում, | մանկավարժական որակյալ կադրերի ընտրություն մրցութային եղանակով | Մելիք-Բախշյան Մ.<br>Թոփուզյան Ա.<br>Սարգսյան Վ.<br>տնօրեններ | 2014-2018թ.թ..<br>Ամեն տարի<br>,օգոստոսին |
| մանկավարժական կադրերի պարբերական վերապատրաստում | աշխատակազմի կարողությունների շարունակական զարգացում | Խաչատրյան Հ.,<br>Տողանյան Ն. | 2014-2018թ.թ.<br>Ամեն<br>տարի ,սեպտեմբեր,<br>Հունվար ամիսներին |
| Խորհրդատուների /մենթորների/ ինստիտուտի ստեղծում՝ երիտասարդ մանկավարժների մասնագիտական հարմարման ապահովման համար:<br>Դասղեկների, տարրական դասարանների ուսուցիչների, դաստիարակների, առարկայական մեթոդ-միավորումների համատեղ պլանների, փոխադարձ դասալսում-ների, քննարկումների կազմակերպում | աշխատակազմի կարողությունների շարունակական զարգացում | Խաչատրյան Հ.,<br>Տողանյան Ն.<br>Սարգսյան Վ. | 2014-2018թթ. |
| «Մանկավարժության և հոգեբանության հիմնախնդիրներ» միջբուհական կոնսորցիում գիտական հանդեսի տարեկան 1 համարի | լավագույն փորձի տարածում, բուհի և կրթահամալիրի գիտական ներուժի օգտագործում և լուսաբանում | Գևորգյան Ս.,<br>Վարդանյան Կ. | Ամեն տարի<br>դեկտեմբերին |

| | | | |
|---|---|---|---|
| *տպագրության կազմակերպում՝ կրթահամալիրի և բուհի մանկավարժների գիտական համատեղ հոդվածների համար* | | | |
| *Ուսումնական նյութերի բովանդակային բարելավման աշխատանքներ /նոր ձեռնարկների, այլ նյութերի փորձարկում և հրատարակություն/* | *առարկայական ծրագրերի ու դասագրքերի, ուսումնադաստիարակչական գործընթացում մեթոդների ընտրության հարցում ուսուցչի ազատության ապահովում* | Տնօրեններ, համապատասխան ամբիոններ | 2015-2018թթ. |
| Բանավեճային ակումբի ստեղծում՝ ուսուցիչների համար | Մանկավարժական նոր գաղափարների և մեթոդների տարածում, մասնագիտական զարգացման և համագործակցության խթանում | Թոփուզյան Ա.<br>Խաչատրյան Հ.<br>Տողանյան Ն.<br>Սարգսյան Վ. | 2014թ.<br>սեպտեմբեր |
| **Խնդիր N6** Համայնքի, ընտանիքի և սոցիալական այլ ինստիտուտների հետ համագործակցության ամրապնդում | | | |
| *Կրթահամալիր - համայնք համագործակցության միջացառումների պլանի մշակում* | կրթահամալիրի, ծնողների, համայնքի և ՏԻՄ-ի հետ համագործակցություն, համայնքի բոլոր երեխաների կրթության մատչելիության ապահովում, համայնքի հիմնախնդիրների լուծման՝ համայնքի ծրագրերի մշակման, նախագծման, գնահատման գործընթացում աշակերտների ներգրավում, նրանց ձայնը | Թոփուզյան Ա.<br>Խաչատրյան Ս.<br>Սաֆարյան Ն. | 2015թ-2018թ.թ. |

| | | | |
|---|---|---|---|
| | լսելի դարձնելու նպատակով, | | |
| Ծնողական համալսարանի կազմակերպում և ծնողներին մանկավարժական, առողջաբանական, հոգեբանական գիտելիքների փոխանցում | *ծնողավարության կարողությունների զարգացում,ծնող-կրթահամալիր կապի ամրապնդում* | Թոփուզյան Ա. Խաչատրյան Հ. Տողանյան Ն. Լպուտյան Ս, Թադևոսյան Հ., Հոգեբանության ամբիոններ | 2015-2018թ.թ. |
| Կրթահամալիրի կրթադաստիարակչական գործընթացին, առօրյային, ծնողների, համայնքում ապրող անվանի մարդկանց ներգրավում | Դաստիարակության և մասնագիտական կողմնորոշման գործընթացների բարելավում, մասնակցային կառավարման կառուցակարգերի ներդնում: | Թոփուզյան Ա. Խաչատրյան Ս. Սաֆարյան Ն. | 2014-2018թթ. |
| Տարրական դասարանների ուսուցիչների, դասղեկների, սոցիալական մանկավարժի, դաստիարակների պարբերական նպատակային այցելությունների կազմակերպում ընտանիքներ և ծնողների այցելություններ դպրոց: | *Կրթահամալիր-ընտանիք, մանկավարժ - ծնող համագործակցության ընդլայնում* | Տնօրեններ | 2014-2018թթ. |
| **Խնդիր N7** Սովորողների ինքնավարության խորացում և զարգացում | | | |

| | | | |
|---|---|---|---|
| Կրթահամալիրի բոլոր աստիճաններում սովորողների ինքնավարության մարմինների ստեղծում՝ տարիքային առանձնահատկությունների հաշվառման և դրանց գործունեության թափանցիկության ու ղեկավար մարմինների պարբերական փոփոխության ապահովման պայմանով: | սովորողների ինքնավարության կառուցակարգերի զարգացում, նախաձեռնողականության և ակտիվության խթանում: | ՈՒԽ, ՈՒԳԸ, տնօրեններ Թոփուզյան Ա. | 2014-2018թ.թ. |
| Սովորողների և ծնողների համատեղ դասարանական ժողովների պարբերաբար կազմակերպում և անցկացում | սովորողների և ծնողների մոտիվացիայի և փոխադարձ հանդուրժո-ղականության զարգացում: | տնօրեններ, դասղեկներ | 2014-2018թթ. |
| Կրթահամալիրի կառավարման խորհրդում, մանկավարժական խորհրդում սովորողների ներկայացուցիչների մասնակցության ապահովում, սովորողների կյանքին վերաբերող հարցերում նրանց ձայնի, կարծիքների հաշվառում: | կրթահամալիրի, դասարանի ներքին կյանքի, իրենց որոշմամբ ստեղծված տարբեր խմբակների, ակումբների, ուսումնադաստիարակչական աշխա-տանքների կազմակերպմանը, դասա-ցուցակի կազմմանը, իրենց դասղեկի ընտրությանը սովորողների ակտիվ մասնակցության ապահովում: | Տնօրեններ Թոփուզյան Ա. | 2014-2018թթ. |
| Ավագ դպրոցի աշակերտների համար <<Ապագա առաջնորդի դպրոց>>-ի ստեղծում, | Աշակերտական ինքնավարությունն ընդլայնում և առաջնորդական | Թոփուզյան Ա. Սարգսյան Վ. | 2015թ. |

| | | | |
|---|---|---|---|
| | հմտությունների զարգացում: | | |
| **Խնդիր N8 Մասնագիտական զարգացման դպրոցի ստեղծում և զարգացում** | | | |
| Կրթահամալիրի մանկավարժական կազմի նախապատրաստում և սեմինարների շարքի կազմակերպում՝ համալսարանի ուսանողների մանկավարժական և հետազոտական պրակտիկայի անցկացման ուղղությամբ | պրակտիկաների կազմակերպման արդյունավետության բարձրացում | Սարգսյան Վ. | 2014-2018թթ. |
| պրակտիկանտ-ուսանողների, կրթահամալիրի մանկավարժների և դասախոս-մեթոդիստների համատեղ դասալսումների, հավաք-քննարկումների պարբերական անցկացում | պրակտիկաների կազմակերպման արդյունավետության բարձրացում | Սարգսյան Վ. | 2014-2018թթ. |
| ուսանողների համար ուղեցույցի պատրաստում՝ պրակտիկայի անցկացման և դրան ներկայացվող պահանջների վերաբերյալ | Պրակտիկայի կազմակերպման գործընթացի բարելավում | Սարգսյան Վ. | 2014թ. սեպտեմբեր |
| Ուսուցիչ-մենթորների հետ միասին մշակել ու ներդնել ուսանողների գիտա-մանկավարժական և հետազոտական պրակտիկաների | Մագիստրոսական պրակտիկայի գործընթացի բովանդակային բարելավում | /Սարգսյան Վ. Պողոսյան Լ., Հարությունյա ն Գ./ | 2014թ. սեպտեմբեր |

| | | | |
|---|---|---|---|
| բովանդակության, կազմակերպման ձևերի, հաշվետվության ու գնահատման արդիականացման համակարգ | | | |
| Ուսուցիչների օգնական-ուսանողների համար ամբիոններում մշտական կոնսուլտացիաների կազմակերպում | ուսուցիչների օգնական-ուսանողներին՝ մասնագիտական կողմնորոշման աշխատանքների նախագծման ու իրականացման, իրենց գործառույթներից բխող այլ աշխատանքների արդյունավետության բարձրացում: | Խաչատրյան Հ.<br>Սարգսյան Վ.<br>ամբիոններ | 2014-2018թթ. |
| Կրթահամալիրում մենթորության ինստիտուտի հիմնում: | Փորձի փոխանցման նոր կառուցակարգերի ներդրում | Խաչատրյան Հ.<br>Սարգսյան Վ.<br>Տողանյան Ն. | 2014թ.<br>Սեպտեմբեր |
| **Խնդիր N9 ԲՈՒՀ-ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ** գիտահետազոտական և այլ համատեղ աշխատանքների իրականացում | | | |
| *Կրթահամալիրի առարկայական մեթոդմիավորումների և համալսարանի պրոֆիլային ամբիոնների համատեղ ուժերով առարկայական ծրագրերի և դասագրքերի,* ուսումնամեթոդական նյութերի *մշակում և փորձարկում* | կրթության հետազոտական հենքի զարգացում | Ամբիոնի վարիչներ և կրթահամալիրի մեթոդ-միավորումներ | 2014-2018թթ. |

| | | | |
|---|---|---|---|
| *Կրթահամալիրի առարկայական մեթոդմիավորումների և համալսարանի պրոֆիլային ամբիոնների համատեղ կոնֆերանսների, առարկայական օլիմպիադաների կազմակերպում* | կրթության հետազոտական հենքի զարգացում,սովորողների մասնագիտական կողմնորոշում, կրթության որակի բարելավում | Ամբիոնի վարիչներ և կրթահամալիրի մեթոդ-միավորումներ | 2015-2018թ.թ.<br>Ամեն տարի |
| *Հանրապետության լավագույն դպրոցների հետ կապի ապահովում* | առաջավոր փորձի ներդնում | Սարգսյան Վ.,<br>տնօրեններ | 2014-2018թթ. |
| Աշխատաշուկայի պահանջներին համապատասխան շարունակական կրթության ապահովման կառուցակարգերի մշակում և ներդրում /ն/դ, հիմնական, ավագ դպրոց, վարժարան/ | Շարունակական կրթության ապահովում | Մելիք-Բախշյան Մ.<br>Սաֆարյան Ն.,<br>Սարգսյան Վ. | 2015թ.<br>Հունվար-մայիս |
| Աշակերտական ամառային ճամբարի ստեղծում /վարժարանի և ավագ դպրոցի սաների համար/ | Շարունակական կրթության ապահովում, մասնագիտական կողմնորոշում | Մելիք-Բախշյան Մ.<br>Թոփուզյան Ա.<br>Խաչատրյան Հ.<br>տնօրեններ | 2015-2018թ.թ.<br>Հուլիս-օգոստոս |

## ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԻ, ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՎՏԱՆԳՆԵՐԻ (SWOT) ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

| **Strengths / Ուժեղ կողմեր** | **weaknesses /Թույլ կողմեր** | |
|---|---|---|
| **1.** Տարիներ շարունակ պրակտիկայի բազա է հանդիսացել<br>**2.** Վարժարանում տարբեր մասնագիտական ուղղվածություններով հոսքային ուսուցման փաստացի կայացած վիճակը,<br>**3.** Կազմակերպվող նպատակային պարբերական վերապատրաստումներ<br>**4.** Զարգացման հստակ նպատակի և ծրագրի առկայությունը<br>**5.** Բուհի դեկավարության և անձնակազմի պատրաստկամությունն ու կատարված աշխատանքը դպրոցի զարգացման ուղությամբ | 1. Նյութական, ժամանակային, տարածքային և մարդկային, ուսումնական ռեսուրսների սակավությունը,<br>2.Ռազմավարական մոտեցումների անհստակությունը /առաջնորդող-նորարարական, ընդհանրական և այլն/,<br>3. Հանրակրթության և մանկավարժական կրթության չափորոշիչների միասնականության բացակայությունը,<br>4. Օրենսդրական խոչընդոտները և իրավական խնդիրները<br>5. Սոցիալական կարծրատիպերի ազդեցությունը,<br>6. Ծնողների և շահակիցների պահանջների վերհանման հստակ քաղաքականության բացակայությունը | Ներքին գործոններ |
| **Opportunities/Հնարավորություններ** | **Threats/Վտանգներ** | |
| **1.** Կաարտաքին ռեսուրսներ ներգրավելու հնարավորություն<br>**2.** Էքսպերիմենտալ բազակրթական հետազոտությունների համար<br>**3.** Կրթության բոլոր օղակների փոխկապակցման հնարավորության առկայություն<br>**4.** Կրթական համակարգը բարելավելու պատրաստակամությունը<br>**5.** Համալսարանի ներուժի ներգրավման հնարավորությունը: | 1. 12-ամյա կրթության ներկավիճակը<br>2. Հիմնական դպրոցի աշակերտների սակավ թվաքանակը<br>3. Տարածաշրջանի քաղաքական անկայունությունը<br>4. Հանրակրթության զարգացման իրավական դաշտի անկատարությունը | Արտաքին գործոններ |
| **Դրական** | **Բացասական** | |